ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 50-Ա/2 **«16» հունվարի 2024 թ.**

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել «Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման գնահատման գործընթացի կազմակերպման կարգը»՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն հրամանով հաստատված Հավելված 27-րդ կետի գործարկումը նախատեսվում է 2027 թվականին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

2024 թ. հունվարի 16-ի

N 50-Ա/2 հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման գնահատման գործընթացի նպատակն է.

   1) օժանդակել ուսումնառության արդյունքների բարելավմանը՝ արհեստավարժ ուսուցիչների և բարենպաստ կրթական միջավայրի ապահովման միջոցով,

   2) համակողմանիորեն վերլուծել սովորողների ուսումնառության արդյունքները և ձեռնարկել ուսումնառության գործընթացի լավարկմանն ուղղված շարունակական փոփոխություններ և

   3) ունենալ համապարփակ տեղեկատվություն կրթական գործունեության վերաբերյալ և հաշվետվողականության մեխանիզմներ

   4) ապահովել տվյալների և տեղեկատվության շարունակական փոխանցում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ քաղաքականության մշակման վերաբերյալ որոշումների կայացման նպատակով:

2. Արդյունավետ գնահատման համակարգը.

   1) սահմանում է սովորողի կարողությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշիչներով ու ծրագրերով սահմանված

վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի,

2) հիմնված է վստահելիության, հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության, թափանցիկության, գաղտնիության և ապահովության պահմպանման սկզբունքների վրա,

3) նպաստում է կրթության արդյունավետության, հավասարության և որակի աճող պահանջարկի բավարարմանը՝ տնտեսական և սոցիալական մարտահրավերներին դիմակայելու համար,

4) նպաստում է ուսումնական հաստատությունների ինքնավարության բարձրացմանը՝ ապահովելով ներքին մշտադիտարկման արդյունավետ մեխանիզմներ,

5) նպաստում է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը՝ սովորողների թե՛ լայնածավալ, թե՛ ընդհանուր և թե՛ անհատական գնահատման, տվյալների վերլուծության և կառավարման իրականացման համար,

6) հնարավորություն է ստեղծում համադրելի, վավեր և հավաստի փաստերի վրա հիմնված որոշումների կայացման համար:

3. Սույն հրամանը սահմանում է Սովորողների գնահատման համապարփակ ազգային շրջանակը (այսուհետ՝ «Շրջանակ»), որը ուղենիշ է գնահատման բոլոր այն գործընթացների համար, որոնք ուղղված են կրթական համակարգի գնահատմանը:

4. Շրջանակում նկարագրված գնահատումները համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կրթական վերջնարդյունքներին:

5. Շրջանակը կարգավորում է հանրակրթական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝

«Հաստատություններ») սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման գնահատման գործընթացի մոտեցումները:

6. Շրջանակը սահմանում է գնահատման տեսակները, դրանց նպատակները, մշակման և իրականացման ընթացակարգերը, արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը, գնահատման արդյունքների տարածումն ու օգտագործումը:

7. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿԸ, ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

8. Գնահատման եղանակները սահմանված են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-N հրամանով:

9. Շրջանակում նկարագրված գնահատումների տեսակներն են.

1) ներքին գնահատում,

2) արտաքին ստանդարտացված գնահատում,

3) միջազգային գնահատում:

10. Ներքին գնահատումը ներառում է հանրակրթական ուսումնական հաստատության կողմից իրականացվող բնութագրող և միավորային գնահատումը:

11. Ներքին գնահատման նպատակն է.

1) բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ,

2) հավաքագրել համապարփակ տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել ուսուցիչներին շարունակական աջակցություն առաջարկելու

նպատակով՝ ուսումնական տարվա ընթացքում սովորողների առաջընթացի և ուսումնառության արդյունքների մշտադիտարկման համար,

3) գնահատել սովորողի ուսումնական հաջողությունները՝ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան՝ թեմայի, դասընթացի, առարկայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին:

12. «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ԿԶՆԱԿ) մշակում և ապահովում է ներքին գնահատման գործիքների առկայությունը, որոնք համահունչ են պետական և առարկայական չափորոշիչներին, ինչպես նաև բոլոր առարկաների և դասարանների ուսումնական ծրագրերին՝ տրամադրելով նաև դրանց կիրառման ուղեցույցներ:

13. Ուսուցիչները մշակում են ներքին գնահատման մեթոդները՝ ուսուցման նպատակներին, ուսումնական պլանի չափորոշիչներին և դասընթացի բովանդակությանը համապատասխան: Դրանք քննարկվում են մեթոդական միավորման նիստերում և հաստատվում տնօրենի կողմից:

14. Ներքին գնահատումն իրականացվում է ապակենտրոնացված եղանակով:

15. Հանրակրթության պետական չափորոշչի ներդրման դասարաններում ուսուցիչներն ուսումնական տարվա ընթացքում կանոնավոր կերպով իրականացնում են ընթացիկ բնութագրական (1-12-րդ) և միավորային (5-12-րդ դասարաններում) գնահատում, իսկ ուսումնական տարվա ավարտին՝ ամփոփիչ գնահատում 1-12-րդ դասարանների համար:

16. Ուսուցիչները վերլուծում են ներքին գնահատման արդյունքները, սովորողների ուսումնառության ձեռքբերումներն ու դժվարությունները:

17. Ներքին գնահատման արդյունքները կիրառելու և վերլուծելու կարողությունները զարգացնելու նպատակով Գնահատման և թեստավորման կենտրոնն (այսուհետ՝ ԳԹԿ) աջակցում է ԿԶՆԱԿ-ին՝ գործընթացը համադրելով արտաքին և միջազգային գնահատման մեթոդաբանության հետ:

18. Ուսուցիչները ներքին գնահատման միջոցով բացահայտում են կրթական վերջնարդյունքներին հասնելու ճանապարհին սովորողների դժվարությունների ոլորտները:

19. Ուսուցիչները համապատասխան փոփոխություններ են կատարում իրենց դասընթացի, դասավանդման մեթոդաբանության և սովորողներին ակադեմիական աջակցություն ցուցաբերելու գործընթացում՝ 20-րդ կետում նշված խնդիրներին համապատասխան լուծումներ առաջարկելու համար:

20. ԿԶՆԱԿ-ն իրականացնում է ուսուցիչների վերապատրաստում, ըստ անհրաժեշտության աջակցություն տրամադրելով ուսուցիչներին՝ 19-րդ կետում նշված փոփոխությունները կատարելու համար:

21. Ուսուցիչները յուրաքանչյուր սովորողի գնահատման արդյունքները սահմանված պարբերականությամբ ներկայացնում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (EMIS) հարթակում:

22. Հաստատության ուսուցիչները և մանկավարժական գործառույթներ իրականացնող անձնակազմն հասանելիություն ունի յուրաքանչյուր սովորողի ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տվյալներին:

23. Արտաքին ստանդարտացված գնահատման նպատակն է.

1) չափել սովորողների ուսումնառության արդյունքները՝ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված բովանդակությանը և կարողունակություններին համապատասխան, կրթական աստիճանի ավարտական դասարաններում (4-րդ, 9-րդ, 12-րդ)՝ կրթական քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման համար սովորողների ակադեմիական առաջադիմության վերաբերյալ վավեր, հավաստի և համադրելի տվյալներ տրամադրելու միջոցով

2) տրամադրել տեղեկատվություն կրթության յուրաքանչյուր մակարդակում բարելավման ենթակա ոլորտների և կրթության հաջորդ մակարդակն անցման համար անհրաժեշտ աջակցության վերաբերյալ:

24. 4-րդ դասարանի ավարտին ուսումնառության արդյունքների վերլուծության և որակի վերահսկողության նպատակով սովորողներին տրվում է ամփոփիչ գրավոր աշխատանք «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից, որոնք գնահատվելու են միավորային գնահատմամբ և չեն համարվելու քննական ամփոփիչ ստուգում: Միավորային գնահատականները չեն մուտքագրվելու էլեկտրոնային համակարգ:

25. ԳԹԿ-ն ստեղծում է բոլոր անհրաժեշտ հանձնաժողովները (օրինակ՝ քննական նյութերի մշակման հանձնաժողով, քննական հարցեր կազմողներ, չափանիշներ սահմանող թիմեր) յուրաքանչյուր գնահատվող առարկայի և դասարանի համար:

26. Այս հանձնաժողովները պատասխանատու են քննական նյութերի հատկորոշիչների (ներառում է գնահատման ենթակա կրթական վերջնարդյունքները՝ բովանդակություն, գիտելիք և հմտություններ, և գնահատման չափանիշները), գնահատման նյութերի աստիճանավորման աղյուսակների մշակման, քննական հարցերի վերանայման գործընթացների և ստանդարտների սահմանման, քննական նյութերի ձևաչափերի և գնահատման արդյունքների վերանայման համար:

27. ԳԹԿ-ն քննությունների մշակման ողջ գործընթացում կազմում է վերլուծություններ, համադրում, գնահատում և արդյունքների վերաբերյալ տալիս հաշվետվություններ՝ կիրառելով ժամանակակից հոգեչափական մեթոդաբանություններ՝ հիմնված գործող միջազգային մասնագիտական ստանդարտի վրա:

28. ԳԹԿ-ն ապահովում է գնահատման որակը, ներառյալ՝ դրա նպատակադրումը և կիրառումը, քննական նյութերի որակը, քննական բովանդակության ներկայացուցչականությունը, գնահատման հուսալիությունը, չափորոշիչների և կանոնների սահմանումն ու կիրարկումը, ինչպես նաև արդարության և անաչառության սկզբունքների պահպանումը:

29. ԳԹԿ-ն վերահսկում է գնահատման իրականացումը՝ ապահովելով ստանդարտացված, արդար և անաչառ պայմաններ: Քննությունների անցկացումը մանրամասնորեն պլանավորվում է՝ քննական նյութերի բաշխման, հավաքագրման և ապահովության պահպանման համար առկա ռեսուրսների հաշվառման և ըստ անհրաժեշտության լրացուցիչ ռեսուրսների ներգրավման միջոցով:

30. Ստանդարտացված կանոնները և ընթացակարգերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հետ համաձայնեցմամբ՝ քննությունների կազմակերպման քաղաքականությանը կարգերին և կանոնակարգերին համապատասխան:

31. Ազգային ստանդարտացված գնահատման ժամանակացույցը հրապարակում է ԿԳՄՍՆ-ն:

32. ԳԹԿ-ն վերլուծում է ազգային ստանդարտացված գնահատման արդյունքները:

33. ԳԹԿ-ն կիրառում է ժամանակակից հոգեչափական մեթոդաբանություն արդյունքների մշակման, վերլուծության, համադրման, գնահատման և հաշվետվությունների համար: Միավորները համապատասխանում են ճշգրիտ և հստակ սահմանված չափանիշներին և ներկայացվում են որպես սանդղակավորված գնահատման միավորներ: Սանդղակները պահպանվում են ըստ մշակված և հաստատուն հավասարեցման սկզբունքի, որն ապահովում է ճշգրիտ համադրելիություն քաղաքականություն մշակողների և կրթության շահակից կողմերի համար:

34. Գնահատման արդյունքներն օգտագործվում են վավերացման գործընթացով սահմանված կարգով:

35. Գնահատման արդյունքները ծառայում են որպես արձանագրված արդյունավետության չափանիշների ցուցանիշ և արտացոլում միտումները (ըստ միևնույն սանդղակի)՝ ժամանակային հեռանկարում:

36. ԳԹԿ-ն տրամադրում է գնահատման համախառն արդյունքներ հանրապետության և տարածքային մակարդակներում, ինչպես նաև հատուկ սովորողների խմբերի համար, որոնք կսահմանվեն ԿԳՄՍՆ-ի հետ համատեղ: Այս արդյունքները հրապարակվում են և հասանելի են հանրությանը:

37. ԳԹԿ-ն անհատ սովորողներին տրամադրում է իրենց արդյունքները՝ անձնական մուտքանունով և գաղտնաբառով, իսկ վերլուծության ամբողջական արդյունքները ներկայացված են ԳԹԿ-ի պաշտոնական կայքում՝ ըստ մարզերի, հաստատությունների, առարկաների:

38. Գնահատման արդյունքներն օգտագործվում են յուրաքանչյուր սովորողի մասնագիտական կողմնորոշման և ձեռք բերված կրթական արդյունքների հավաստագրման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու և կրթական հաստատություններին հետադարձ կապ տրամադրելու նպատակով, ինչպես նաև ծառայում են կրթության քաղաքականության և կրթական ոլորտի գործունեության հետ կապված որոշումների կայացմանը:

39. Միջազգային գնահատումների նպատակը տարբեր երկրների կրթական արդյունքների գնահատումն ու համեմատությունն է՝ քաղաքականություն մշակողներին տեղեկացնելով արդյունավետ ռազմավարությունների և բարելավման կարիք ունեցող ոլորտների մասին, ինչպես նաև նպատակ ունենալով բարելավել կրթության որակը և կրթության գնահատման անաչառությունը համաշխարհային մասշտաբով:

40. ԳԹԿ-ն աջակցում է թարգմանությունների ընթացքում միջազգային ստուգատեսի առաջադրանքների մշակութային տեղայնացմանը՝ ապահովելով մշակութային համապատասխանություն և ընկալելիություն բնակչության տարբեր շերտերի շրջանում:

41. ԳԹԿ-ն կազմակերպում է ստուգատեսի փորձնական փուլ և տեղային փորձարկումներ տեղի կրթական հաստատություններում՝ գնահատում անցկացնելով սովորողների, ուսուցիչների կամ հաստատությունների շրջանակներում և հետադարձ կապ տրամադրելով ստուգատեսում ներառված հարցերի բարդության, հստակության և մշակութային համապատասխանության վերաբերյալ:

42. ԳԹԿ-ն ապահովում է գնահատումների պատշաճ անցկացումը և տվյալների հավաքագրումը՝ համաձայն ստանդարտացված կանոնակարգերի:

43. ԳԹԿ-ն վերլուծում է տեղի վարկանիշները և միավորները այլ մասնակից պետությունների հետ համեմատությամբ՝ որոշելով երկրի հարաբերական դիրքերը, ինչպես նաև ուսումնասիրելով առանձին առարկաների ցուցանիշները, ոլորտի ուժեղ և թույլ կողմերը:

44. ԳԹԿ-ն վերլուծում է կրթական արդյունքների և սովորողների կատարողականի վրա սոցիալ-տնտեսական կարգավիճակի, կրթական քաղաքականության, ուսումնական ծրագրերի փոփոխությունների, սովորողների ժողովրդագրության (սեռ, էթնիկ պատկանելիություն, լեզու) և արդյունավետ ուսուցման մեթոդների ազդեցությունը:

45. ԿԶՆԱԿ-ը օգտագործում է վերլուծությունների արդյունքները՝ որոշակի առարկաներում կամ սովորողների տարբեր խմբերում հայտնաբերված թերությունների շտկմանն ուղղված ռազմավարություններ մշակելու, միևնույն ժամանակ այդ արդյունքները կրթական քաղաքականության և ուսումնական ծրագրերի բարելավման նպատակով:

46. Վերլուծության հիման վրա ԿԶՆԱԿ-ը նախանշում է ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման բարելավման հնարավորությունները, ինչպես նաև իր ռեսուրսներն ուղղում է բարելավման կարիք ունեցող ոլորտների զարգացմանը:

47. ԿԳՄՄՆ-ն ուսուցիչներին և կրթության ոլորտի մասնագետներին ներգրավում է արդյունքների քննարկման գործընթացում, օգտագործում է ստացված տվյալները քաղաքականություն մշակողների, կրթական խորհուրդների և շահակից կողմերի հետ քննարկումներ սկսելու համար:

48. Առաջընթացի շարունակական մշտադիտարկման և իրականացվող միջամտությունների կամ քաղաքականության փոփոխությունների արդյունավետությունը գնահատելու համար ԿԳՄՄՆ-ն ստեղծում է համակարգեր՝ հետևողականորեն կիրառելով գնահատման արդյունքների միջոցով ռազմավարական բարեփոխումների իրականացման միանման մոտեցումը:

3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

49. Գնահատման շրջանակն ուժի մեջ է մտնում 2026-2027 ուսումնական տարում՝ Հանրակրթության նոր պետական չափորոշչի ամբողջական ներդրմանը զուգահեռ:

50. Սույն հրամանին համապատասխան՝ ԿԳՄՄՆ-ն մշակում և սահմանում է կանոնակարգեր, որոնք կկարգավորեն սույն Հավելվածում նկարագրված ներքին, արտաքին ստանդարտացված և միջազգային գնահատումների իրականացումը:

51. ԿԳՄՄՆ-ն ապահովում է, որ վերոհիշյալ կանոնակարգերը (տե՛ս կետ 50) հաստատվեն ոչ ուշ, քան 2024 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակում: